ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2015 թվականի **թիվ 92** քաղ. Աստանա

Բույսերի կարանտինի համար նախատեսված կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) նյութատեխնիկական հագեցվածությանն ու սարքավորվածությանը ներկայացվող պահանջները հաստատելու եւ Մաքսային միության արտաքին սահմանով անցման կետերում իրականացվող սահմանային, մաքսային, սանիտարակարանտինային, անասնաբուժական, կարանտինային բուսասանիտարական եւ տրանսպորտային հսկողության կազմակերպման համար անհրաժեշտ շենքերի, տարածքների եւ շինությունների սարքավորմանն ու նյութատեխնիկական հագեցվածությանը ներկայացվող միասնական տիպային պահանջներում փոփոխություններ կատարելու մասին

«Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին»

2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 12 հավելված) 20-րդ կետին, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 60-րդ կետին համապատասխան եւ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 24-րդ կետի 1-ին ենթակետի իրագործման նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ բույսերի կարանտինի համար նախատեսված կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) նյութատեխնիկական հագեցվածությանն ու սարքավորվածությանը ներկայացվող պահանջները։

2. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 688 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության արտաքին սահմանով անցման կետերում իրականացվող սահմանային, մաքսային, սանիտարակարանտինային, անասնաբուժական, կարանտինային բուսասանիտարական եւ տրանսպորտային հսկողության կազմակերպման համար անհրաժեշտ շենքերի, տարածքների եւ շինությունների սարքավորմանն ու նյութատեխնիկական հագեցվածությանը ներկայացվող միասնական տիպային պահանջներում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) I բաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2^1 կետով.

«2^1 Բույսերի կարանտինի համար նախատեսված նոր կառուցվող կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) նյութատեխնիկական հագեցվածությունը, սարքավորվածությունը եւ բույսերի կարանտինի համար նախատեսված գործող կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) վերակառուցումն անցման կետերում իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների

կողմից՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 14 թիվ 92 որոշմամբ հաստատված՝ բույսերի կարանտինի համար նախատեսված կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) նյութատեխնիկական հագեցվածությանն ու սարքավորվածությանը ներկայացվող պահանջները:».

բ) հանել 3-րդ կետի տասնյոթերորդ պարբերությունը.

գ) 7–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «Բուսասանիտարական հսկիչ կետի՝ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) կազմակերպման համար անհրաժեշտ շենքերը, կառույցներն ու շինությունները, այդ թվում՝ անցման կետում հսկիչ կետի տեղակայման դեպքում, սարքավորվում են համալիր կերպով՝ հաշվի առնելով այդ կետի (անցման կետի) հետագա զարգացման հնարավորությունը՝ առանց խախտելու դրա գործունեությունը։

Բուսասանիտարական հսկիչ կետի նախագծման ժամանակ աշխատանքային տեղերի թիվը որոշվում է՝ ելնելով «վեց քառակուսի մետր մեկ աշխատանքային տեղի համար» նորմատիվից։

դ) ուժը կորցրած ճանաչել 19-րդ կետը,

ե) 25-րդ կետում՝

վեցերորդ պարբերությունից հանել «եւ բույսերի կարանտինի համար նախատեսված սահմանային կետի (բուսասանիտարական հսկիչ կետի)» բառերը,

յոթերորդ եւ ութերորդ պարբերություններից հանել «, ԲԿՍԿ (ԲՀԿ)» բառերը։

3. Սահմանել, որ սույն Որոշմամբ հաստատված պահանջները չեն տարածվում բույսերի կարանտինի համար նախատեսված կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) վրա դրանց՝ մինչեւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելը սկսված վերակառուցման ժամանակ։

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Վ. Դիլ	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի

2015 թվականի հոկտեմբերի 14-ի
թիվ 92 որոշմամբ

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Բույսերի կարանտինի համար նախատեսված կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) նյութատեխնիկական հագեցվածությանն ու սարքավորվածությանը ներկայացվող

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն պահանջները մշակված են «Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ իրականացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 12 հավելված) 20-րդ կետին համապատասխան եւ դրանցով սահմանվում են պահանջներ բույսերի կարանտինի համար նախատեսված նոր կառուցվող կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) (այսուհետ՝ բուսասանիտարական հսկիչ կետեր) նյութատեխնիկական հագեցվածության ու սարքավորվածության եւ բույսերի կարանտինի համար նախատեսված գործող կետերի (բուսասանիտարական հսկիչ կետերի) վերակառուցման նկատմամբ այն անցման կետերում, որոնք նախատեսված են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության

վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) տեղափոխման համար (այսուհետ համապատասխանաբար՝ անցման կետեր, Միություն, կարանտինային հսկողության վերցված արտադրանք)։

2. Սույն պահանջներում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված իմաստներով։

II. Ընդհանուր պահանջներ։

3. Բուսասանիտարական հսկիչ կետի շինարարության (վերակառուցման) նախագիծը, անձանց, տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի անցումը կազմակերպելու սխեման, տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) անցկացման համար տեխնոլոգիական սարքավորումների քանակը եւ տեղադրման վայրերը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի անցման, պահպանման, վարակազերծման եւ ոչնչացման (ուտիլիզացման) համար տեխնոլոգիական սարքավորումների կազմը, տիպը եւ տեղադրման վայրը համաձայնեցվում են Միության անդամ պետությունների՝ բույսերի կարանտինի հարցերով լիազորված մարմինների (այսուհետ՝ լիազորված մարմիններ) եւ Միության անդամ պետությունների՝ հսկողություն իրականացնող այլ մարմինների հետ՝ բուսասանիտարական հսկիչ կետն անցման կետում տեղակայելու դեպքում։

4. Բուսասանիտարական հսկիչ կետի տեղակայման վայրն ընտրվում է՝ կախված միջազգային տրանսպորտային հաղորդակցության տեսակից, Միության մաքսային սահմանով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տեղափոխման ինտենսիվությունից, բնական առանձնահատկություններից, բեռնային գործողություններ իրականացնելու համար նախատեսված՝ գոյություն

ունեցող կամ նախագծվող շենքերի ու շինությունների դիրքից, կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) եւ հսկողության այլ տեսակների ընթացակարգերի իրականացումից։

5. Զննման համար նախատեսված շինությունները, արտադրական կառույցներն ու հատուկ հրապարակների տարածքները պետք է նախագծված լինեն այնպես, որ պայմաններ ապահովեն կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծման համար եւ համապատասխանեն Միության անդամ պետությունների օրենսդրության պահանջներին։

6. Բուսասանիտարական հսկիչ կետի շենքերի, կառույցների ու շինությունների քանակը որոշվում է՝ կախված կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բեռնահոսքի ինտենսիվությունից։

7. «Բուսասանիտարական հսկիչ կետի՝ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) կազմակերպման համար անհրաժեշտ շենքերը, կառույցներն ու շինությունները, այդ թվում՝ անցման կետում հսկիչ կետի տեղակայման դեպքում, սարքավորվում են համալիր կերպով՝ հաշվի առնելով այդ կետը (անցման կետը) հետագայում զարգացնելու հնարավորությունը՝ առանց խախտելու դրա գործունեությունը։ Բուսասանիտարական հսկիչ կետ նախագծելիս աշխատանքային տեղերի թիվը որոշվում է՝ ելնելով «6 քառակուսի մետր՝ մեկ աշխատանքային տեղի համար» նորմատիվից։

8. Բուսասանիտարական հսկիչ կետի շինությունները պետք է սարքավորված լինեն օդափոխման, օդորակման համակարգերով, ջեռուցման համակարգով, ջրամատակարարման ու կոյուղու համակարգով, հակահրդեհային ազդանշանման համակարգով եւ հրդեհաշիջման միջոցներով, ազդարարման համակարգով՝ արտակարգ իրավիճակի դեպքում։

9. Բուսասանիտարական հսկիչ կետն ապահովվում է ավտոմոբիլային տրանսպորտով, ինչպես նաեւ սարքավորվում է տրանսպորտային միջոցների կայանման համար հրապարակով։

10. Այն ծովային, գետային, լճային կետերի, երկաթուղային եւ

ավտոմոբիլային կայանների, միջազգային օդանավակայանների շուրջ, որոնցում ստեղծվել են բուսասանիտարական հսկիչ կետեր, 3 կիլոմետրանոց գոտում անցկացվում են կարանտինային հսկողության վերցված օբյեկտների պարբերական կարանտինային բուսասանիտարական հետազոտություններ։

11. Բուսասանիտարական հսկիչ կետի մերձատար ուղիները, երթեւեկելի ճանապարհներն ու հետիոտնային ուղիները, բեռնման-բեռնաթափման հրապարակները պետք է ունենան փոշի չառաջացնող, հարթ, անջրաթափանց, լվանալու եւ ախտահանելու համար հեշտ հասանելի կոշտ ծածկույթ, ջրատար խողովակների լավ համակարգ՝ մթնոլորտային տեղումների, ձնհալքի եւ ողողաջրերը կոյուղի հեռացնելու համար։ Բուսասանիտարական հսկիչ կետերի տարածքում չի թույլատրվում ծառային բուսականության ու թփուտների առկայությունը։

III. Բուսասանիտարական հսկիչ կետերի ծառայողական շինությունների կազմը եւ դրանց ներկայացվող պահանջները

12. Բուսասանիտարական հսկիչ կետերի գործունեության համար նախատեսվում են հետեւյալ ծառայողական շինությունները՝

ա) օպերատիվ նշանակության շինություններ,

բ) հատուկ նշանակության շինություններ,

գ) կենցաղային (տնտեսական) նշանակության շինություններ։

13. Բուսասանիտարական հսկիչ կետի ծառայողական շինության մուտքը սարքավորվում է տեղեկատվական ցուցանակներով, որոնք պարունակում են տեղեկություններ դրա անվանման, բուսասանիտարական հսկիչ կետի եւ համապատասխան լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանման գերատեսչական ենթակայության, աշխատանքի ռեժիմի, կոնտակտային հեռախոսահամարների մասին, ինչպես նաեւ տեղեկատվական ստենդներով, որոնք պարունակում են հետեւյալ տեղեկությունները՝

ա) լիազորված մարմնի գտնվելու վայրը, աշխատանքի գրաֆիկը, հեռախոսահամարը, պաշտոնական կայքի հասցեն՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում,

բ) քաղվածքներ լիազորված մարմնի պաշտոնատար անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրական եւ այլ նորմատիվ իրավական ակտերից։

14. Օպերատիվ նշանակության շինություններն օգտագործվում են անմիջականորեն կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող բուսասանիտարական հսկիչ կետերի պաշտոնատար անձանց տեղավորելու համար։

15. Հատուկ նշանակության շինություններն օգտագործվում են կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փորձանմուշների ու նմուշների, հատուկ տեխնիկական միջոցների եւ քիմիական ռեակտիվների լաբորատոր հետազոտություններ, շտապ վերլուծություն անցկացնելու եւ պահպանելու համար, տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքը վարակազերծելու համար, կարանտինային հսկողության վերցված վարակված արտադրանքը ոչնչացնելու համար։

16. Միջազգային օդանավակայանների, ծովային (գետային) նավահանգիստների, երկաթուղային եւ ավտոմոբիլային կայանների ուղեւորական ուղղությունների անցման կետում բուսասանիտարական հսկիչ կետի տեղակայման դեպքում միջազգային հաղորդակցության տրանսպորտային միջոցների ուղեւորների եւ սպասարկող անձնակազմի ձեռքի ծանրոցի եւ ուղեբեռի զննման համար մաքսային հսկողության գոտիներում տեղադրվում են անհրաժեշտ տեխնիկական եւ կապի միջոցներով սարքավորված սրահներ, խցիկներ, կանգնակներ։

17. Բեռնատար տերմինալների անցման կետում բուսասանիտարական հսկիչ կետի տեղակայման դեպքում որոշվում են անհրաժեշտ տեխնիկական եւ կապի միջոցներով սարքավորված աշխատանքային տեղեր՝ կարանտինային

բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար, որոնք տեղադրվում են մաքսային հսկողության գոտիներում, այդ թվում՝ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների զննման գոտիներում։

18. Բեռնման-բեռնաթափման աշխատանքների անցկացման վայրերում տեղադրվում է տակդիրների (պալետ), ընդկալների եւ այլ հարմարանքների վրա ապրանքները կշռելու հնարավորություն ապահովող կշռող սարքավորում։

19. Բուսասանիտարական հսկիչ կետի ծառայողական շինությունները սարքավորվում են թիվ 1 հավելվածի համաձայն սահմանված՝ տիպային ցանկին համապատասխան։

IV. Տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման համար նախատեսված շինություններին ներկայացվող պահանջները

20. Տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (տրանսպորտի եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի համապատասխան տեսակի համար) կարանտինային բուսասանիտարական շուրջտարյա հսկողության (վերահսկողության) համար շինությունները պետք է ապահովեն կարանտինային հսկողության վերցված արտադրանքի պահպանման համար անհրաժեշտ տեխնոլոգիական ռեժիմն ու պայմանները, ինչպես նաեւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ձեւակերպման ժամանակահատվածում կարանտինային օբյեկտների տարածման կանխարգելումը։

21. Տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման համար նախատեսված շինությունները (այսուհետ՝ զննման համար նախատեսված շինություններ) պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝

ա) լուսավորումը (բնական, արհեստական, ընդհանուր, տեղային) պետք է ապահովի տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում անցկացնելու համար լուսավորության բավարար մակարդակ,

բ) պատերը չպետք է ունենան ճաքեր, պետք է լինեն ներկված կամ սպիտակեցված, պատուհանները պետք է հերմետիկ փակվեն,

գ) հատակները պետք է ունենան հարթ, առանց փոսերի, չսահող, մաքրելու համար հարմար, աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր մեխանիկական, ջերմային կամ քիմիական ազդեցությունների նկատմամբ կայուն մակերես։ Հատակների կոնստրուկցիայի տարրերը չպետք է կուտակեն կամ կլանեն աշխատանքների իրականացման ընթացքում հատակին ընկնող վնասակար նյութեր։ Հատակի մակերեսը պետք է ունենա թեքություն՝ մթնոլորտային տեղումների ջրերը, հեղուկները՝ դեպի վաքեր, հատականցքեր կամ ջրանցքներ հոսքի համար.

դ) շինությունների չափսերը պետք է ապահովեն տրանսպորտի հարահոս շարժումը եւ առանց մանեւրելու ելքը։

22. Շինություններից դուրս գտնվող վայրերում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում անցկացնելու եւ բեռնման-բեռնաթափման համար սարքավորվում են շվաքարաններ։

23. Տրանսպորտային միջոցներից կարանտինային հսկողության վերցված արտադրանքը զննման համար նախատեսված շինությունում դատարկելու վայրերում ջերմաստիճանը տարվա ցուրտ եղանակին պետք է լինի 10 °C-ից ոչ ցածր։

24. Զննման համար նախատեսված շինություններում՝ անմիջապես զննում անցկացնելու եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բեռնման-բեռնաթափման վայրերում պետք է տեղադրվեն հարթակներ, էստակադներ, թեքահարթակներ։ Անհրաժեշտության դեպքում հարթակները,

էստակադները, թեքահարթակները պետք է սարքավորել հավասարիչ հարթակներով կամ օգտագործել կամրջակներ, հեծանաձակեր։

V. Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) տեխնիկական միջոցներով բուսասանիտարական հսկիչ կետի հագեցվածությանը ներկայացվող պահանջները

25. Բուսասանիտարական հսկիչ կետի օպերատիվ եւ հատուկ նշանակության շինություններում տեղադրվում են կապի տեխնիկական միջոցներ։

26. Արտադրական սարքավորումների տեղադրումը պետք է ապահովի անվտանգությունը, սպասարկման եւ վերանորոգման հարմարավետությունը, համապատասխանի տեխնոլոգիական գործընթացի հաջորդականության պահանջներին եւ տեխնոլոգիական նախագծման հաստատված նորմերին։

27. Սարքավորումների եւ տեխնիկական միջոցների յուրաքանչյուր տեսակի անհրաժեշտ քանակը որոշվում է ըստ հետեւյալ ելակետային տվյալների՝

ա) ծրագրվող բեռնահոսքը,

բ) ծրագրվող ուղեւորահոսքը,

գ) կարանտինային հսկողության վերցված տեղափոխվող արտադրանքի տեսակը,

դ) աշխատանքի ռեժիմը (հերթափոխությունը)։

28. Բուսասանիտարական հսկիչ կետը կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար հագեցվում է սարքավորումներով եւ գույքով՝ թիվ 2 հավելվածի համաձայն սահմանված տիպային ցանկին համապատասխան։

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

Բույսերի կարանտինի համար
նախատեսված կետերի
(բուսասանիտարական հսկիչ կետերի)
նյութատեխնիկական հագեցվածությանն
ու սարքավորվածությանը ներկայացվող
պահանջների

ՏԻՊԱՅԻՆ ՑԱՆԿ

Բուսասանիտարական հսկիչ կետի ծառայողական շինությունների սարքավորումների

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
Օպերատիվ նշանակության շինություններ				
Բուսասանիտարական հսկիչ կետի հերթապահ	առնվազն 6 մ^2՝ յուրաքանչյուր մասնագետի համար	աշխատանքային սեղան, աթոռներ, փաստաթղթերի պահարան, չհրկիզվող	յուրաքանչյուր մասնագետի համար համակարգիչ՝ «Ինտերնետ»	հեռախոսային, ֆաքսիմիլային, բջջային կապ, էլեկտրոնային փոստ,

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
տեսուչների հերթափոխի սենյակ		պահարան՝ յուրաքանչյուր մասնագետի համար	տեղեկատվական-հաղորդակցական ցանցի օգտագործման հնարավորությամբ, պատճենահանման սարք, ֆաքս, տեսաներածող սարք, տպիչ սարք, հաշվիչ, հեռախոս	ռադիոկայաններ (ստացիոնար եւ շարժական), ներքին հեռախոսային կապ
Բուսասանիտարական հսկիչ կետի պետի աշխատասենյակ	առնվազն 12 մ^2	աշխատանքային սեղան, աթոռներ, հագուստի պահարան, փաստաթղթերի պահարան	համակարգիչ՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի օգտագործման հնարավորությամբ, հեռախոս	հեռախոսային, ֆաքսիմիլային, բջջային, ներքին հեռախոսային կապ
		Հատուկ նշանակության շինություններ		
Կարանտինային	առնվազն 20 մ^2	լաբորատոր սեղաններ,	ջրամատակարարման եւ	հեռախոսային,

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
բուսասանիտարական լաբորատորիա		թրթռումից պաշտպանված սեղան՝ կշռելու համար, սեղան՝ քիմիական անալիզներ կատարելու համար, աթոռներ, լաբորատոր դարակաշարեր՝ սարքավորումներն ու օժանդակ գույքը պահելու համար, պահարաններ	կոյուղու համակարգ, համակարգիչ, պատճենահանման սարք, ֆաքս, տեսաներածող սարք, տպիչ սարք, հաշվիչ, հեռախոսներ, լաբորատոր սարքավորումներ, սառցախցիկով սառնարան, լվացարանակոնք՝ սառը եւ տաք ջրի ծորակ-խառնիչով, հեռախոս	ֆաքսիմիլային, ներքին հեռախոսային կապ
Շինություն (պահեստ)՝ հսկողության տեխնիկական միջոցները պահելու համար	առնվազն 16 մ^2	դարակաշարեր՝ հսկողության տեխնիկական միջոցները պահելու համար, սեղան, աթոռ, չհրկիզվող պահարան՝	անվտանգության ազդարարման համակարգ, հեռախոս	ներքին հեռախոսային կապ

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
		փաստաթղթերը պահելու համար		
Շինություն՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փորձանմուշների եւ նմուշների պահման համար	առնվազն 9 մ²	դարակաշարեր եւ պահարաններ՝ փորձանմուշների եւ նմուշների պահման համար, սեղան, աթոռներ	սառնարանային խցիկ, հեռախոս	ներքին հեռախոսային կապ
Շինություն (պահեստ)՝ պահման հատուկ պայմաններ պահանջող՝ կարանտինային հսկողության վերցված արգելապահված արտադրանքի	առնվազն 60 մ²	սեղան, աթոռներ	սառնարանային խցիկ, հեռախոս	ներքին հեռախոսային կապ

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
պահման համար				
Շինություն՝ տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման համար	կախված տրանսպորտի տեսակից եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ծավալից	սրահ, խցիկ, կանգնակ	հիդրավլիկ հավասարիչ հարթակ, ավտոբեռնիչ կամ էլեկտրաբեռնիչ, էլեկտրասայլակ, սանդուղք, էստակադ	ռադիոկապ
Շինություն՝ օդանավակայանի, ծովային (գետային) նավահանգստի, երկաթուղային կայարանի կամ ավտոմոբիլային կայանի բեռնատար	առնվազն 10 մ²	աշխատանքային սեղան, աթոռներ, փաստաթղթեր պահելու պահարան, չհրկիզվող պահարան, փորձանմուշների տեսազննման, նմուշների ձեւավորման	համակարգիչ, պատճենահանող սարք, ֆաքս, հեռախոս	հեռախոսային (քաղաքային եւ ներքին), բջջային կապ, ռադիոկապ

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
տերմինալում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) անցկացնելու համար		եւ փաթեթավորման համար նախատեսված լաբորատոր սեղան		
Կարանտինային հսկողության վերցված վարակված արտադրանքի ոչնչացման համար նախատեսված շինություն	10-15 մ^2	արգելամսեղիքի ջերմային ոչնչացման համար նախատեսված վառարան կամ բուսասանիտարական հոր, սարքավորումներ պահելու համար	հեռախոս	ներքին հեռախոսային կապ

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
(հրապարակ)		նախատեսված պահարան, սեղան, աթոռներ		
Թունաքիմիկատների պահման համար նախատեսված շինություն (պահեստ)	10 մ²	սեղան, աթոռներ, դարակաշարեր, թունավոր նյութերի պահման համար նախատեսված մետաղական պահարան	հեռախոս	ներքին հեռախոսային կապ
Տրանսպորտային միջոցների եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծման համար սարքավորումներով			ծխահարման շարժական խցիկ՝ 4 մ³ ծավալով, երկաթուղային վագոնների վակուումային խցիկներ՝ 300 մ³ ծավալով (կամ վարակազերծման համարժեք համակարգ), ավտոմեքենաների եւ	ներքին հեռախոսային կապ

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
շինություն (հրապարակ)			բեռնարկղերի վակուումային խցիկներ՝ 150 մ³ ծավալով (կամ վարակազերծման համարժեք համակարգ) 1-2 մ³ տարողությամբ ոչ վակուումային խցիկներ, հեռախոս	
Կենցաղային (տնտեսական) նշանակության շինություններ				
Հանդերձարան	12 մ²	պահարաններ՝ վերնազգեստի համար, բազմոց, սեղան, աթոռներ, չորուցիչ՝ հագուստի եւ կոշկեղենի համար		

Անվանումը	Մակերեսը	Կահույք	Սարքավորումներ	Կապ
Պահեստասենյակ	6-8 մ^2	ախտահանիչ միջոցների եւ տնտեսական գույքի պահման համար նախատեսված դարակաշարեր	բարձր ճնշման ապարատ՝ շինության սարքավորումները ախտահանելու համար	
Սանիտարական բլոկ՝ (զուգարան, ցնցուղ) տղամարդկանց եւ կանանց համար	6 մ^2	Ցնցուղարան, ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարանակոնք՝ սառը եւ տաք ջրի ծորակ-խառնիչով, զուգարանակոնք	ջրամատակարարման եւ կոյուղու համակարգ	
Հանգստի սենյակ (ճաշարան)	առնվազն 20 մ^2 (կախված մասնագետների թվից)	սեղաններ, աթոռներ, բազմոց, սպասքի պահարան	հեռուստացույց, սառնարան, ներքին հեռախոսային կապ միկրոալիքային վառարան, էլեկտրաթեյնիկ, հեռախոս	

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 2

Բույսերի կարանտինի համար
նախատեսված կետերի
(բուսասանիտարական հսկիչ կետերի)
նյութատեխնիկական հագեցվածությանն
ու սարքավորվածությանը ներկայացվող
պահանջների

ՏԻՊԱՅԻՆ ՑԱՆԿ

կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար նախատեսված սարքավորումների եւ գույքի

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
Բուսասանիտարական հսկիչ կետում կարանտինային բուսասանիտարական ստացիոնար լաբորատորիայի համալրման համար նախատեսված սարքավորումների ցանկ					
1. Նոութբուք՝ ծրագրային ապահովմամբ	հատ	1	1	1	1

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
2. Բջջային հեռախոս	-"-	1	1	1	1
3. Դյուրակիր բժշկական սառնարան	-"-	2	2	2	2
4. Հոսանքի գեներատոր	-"-	1	1	1	1
5. Պինդմարմնային ջերմապահպանիչ (40 x 1,5 մլ եւ 28 x 0,5 մլ)	-"-	1	1	1	1
6. Ցենտրիֆուգ (12 տեղ, 13 400 պտ/ր)	-"-	1	1	1	1
7. Միկրոցենտրիֆուգ (2400 պտ/ր)	-"-	1	1	1	1
8. Բազմաալիքային ամպլիֆիկատոր՝ ավտոնոմ ծրագրավորման հնարավորությամբ (4 x 10 x 0,5 մլ)	-"-	1	1	1	1
9. Պոլիմերազային շղթայական ռեակցիայի դետեկտոր՝ ֆլուորեսցենտային, ծրագրային ապահովում	հատ	1	1	1	1

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
10. Ջերմապահպանիչ	-"-	1	1	1	1
11. Թափահարիչ՝ փորձանմուշի պատրաստման համար, հորիզանական	-"-	1	1	1	1
12. Ավտոկլավ՝ ուտիլիզացման համար	-"-	1	1	1	1
13. Ջրի մաքրման համակարգ	լրակազմ	1	1	1	1
14. Բաժնաչափիչ (0,5 - 10 մկլ)	հատ	1	1	1	1
15. Բաժնաչափիչ (2 - 20 մկլ)	-"-	1	1	1	1
16. Բաժնաչափիչ (20 - 200 մկլ)	-"-	1	1	1	1
17. Բաժնաչափիչ (100 - 1000 մկլ)	-"-	1	1	1	1
18. Կալաններ՝ փորձանոթների համար (100 x 0,5 մլ՝ յուրաքանչյուր աշխատանքային տեղի համար)	-"-	1	1	1	1
19. Կալան՝ բաժնաչափիչի համար	-"-	4	4	4	4

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
20. Կալաններ՝ փորձանոթների համար (50 x 1,5 մլ՝ յուրաքանչյուր աշխատանքային տեղի համար)	-"-	2	2	2	2
21. Կալան (20 x 0,5 մլ՝ յուրաքանչյուր աշխատանքային տեղի համար)	-"-	1	1	1	1
22. Ծայրակալներ (0,5 - 20 մկլ, մեկ փաթեթվածքում՝ 1000 հատ)	փաթեթվածք	5	5	5	5
23. Ծայրակալներ (0,5 - 200 մկլ, մեկ փաթեթվածքում՝ 1000 հատ)	-"-	5	5	5	5
24. Ծայրակալներ (0,1 - 10 մկլ, մեկ փաթեթվածքում՝ 1000 հատ)	-"-	5	5	5	5
25. Ծայրակալներ (100 - 1000 մկլ, մեկ փաթեթվածքում՝ 1000 հատ)	փաթեթվածք	5	5	5	5
26. Ախտորոշիչ թեստ-համակարգեր	լրակազմ	1	1	1	1

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
27. Լաբորատոր պարագաներ	-"-	1	1	1	1
28. ՈՒՄ-լամպեր	հատ	2	2	2	2
29. Փորձանոթներ (0,6 մլ, մեկ փաթեթվածքում՝ 500 հատ)	փաթեթվածք	50	50	50	50
30. Փորձանոթներ (1,6 մլ, մեկ փաթեթվածքում՝ 500 հատ)	-"-	50	50	50	50
31. Քեյս	հատ	1	1	1	1
32. Ունելի	-"-	5	5	5	5
33. Վիրադանակներ	-"-	10	10	10	10
34. Դյուրակիր տպիչ սարք	-"-	1	1	1	1
35. Դյուրակիր ցիստոանջատիչ	-"-	1	1	1	1
36. Ռեագենտների լրակազմ՝ ախտորոշման համար (100 թեստ)	լրակազմ	1	1	1	1

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
37. Ռեագենտների լրակազմ՝ բուսաբուծական արտադրանքում 35S-պրոմոտորի եւ տերմինատորի հայտնաբերման համար (50 թեստ)	-"-	1	1	1	1
38. Սանդ՝ թիվ 3 (90 մմ), թիվ 2 սանդաթակով	հատ	50	50	50	50
Տեսուչի պայուսակի լրակազմ՝ նախատեսված կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում անցկացնելու համար					
1. Լապտեր	հատ	1	1	1	1
2. Ակնոցներ ԲԼ-2-1	-"-	1	1	1	1
3. Կապարակնքիչ	-"-	1	1	1	1
4. Կապարակնիքներ	հատ	100	100	100	100
5. Մետաղալար՝ կապարակնքման համար	մ	10	10	10	10

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
6. Մկրատ	հատ	1	1	1	1
7. Վիրադանակ	-"-	2	2	2	2
8. Ունելի	-"-	2	2	2	2
9. Փորձանոթներ	-"-	20	20	20	20
10. Խոշորացնող ապակիներ	-"-	5	5	5	5
11. Օդաձծիչ	-"-	1	1	1	1
12. Արանքաչափիչ՝ պարկերի համար	-"-	1	1	1	1
13. Արանքաչափիչ՝ ավտոմոբիլների համար	-"-	1	1	1	1
14. Թիակ	-"-	2	2	2	2
15. Վրձին փոքր	-"-	3	3	3	3
16. Վրձին՝ թափոնները հավաքելու համար	-"-	2	2	2	2
17. Նոթատետր (15 x 20 սմ, 150 թերթ)	-"-	2	2	2	2

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
18. Գրիչ	-"-	2	2	2	2
19. Մատիտ	-"-	2	2	2	2
20. Շնչադիմակ	-"-	1	1	1	1
21. Բամբակե պարկեր՝ հողի նմուշների համար	-"-	30	30	3	30
22. Առուներ (կյուվետներ)	-"-	2	2	2	2
23. Ձեռնոցներ	լրակազմ	5	5	5	5
24. Ցելոֆանե տոպրակներ	հատ	50	50	50	50
25. Պատրաստուկային ասեղներ	-"-	10	10	10	10
26. Կոմբինեզոն	-"-	1	1	1	1
Տեսուչի պայուսակի լրակազմ՝ նախատեսված անտառանյութի զննում անցկացնելու համար					
1. Կացին	հատ	1	1	1	1

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
2. Կեռն (հանուկ)	-"-	1	1	1	1
3. Դուր	-"-	1	1	1	1
4. Գրչահատ	-"-	1	1	1	1
5. Մետաղասղոց՝ ծառի	-"-	1	1	1	1
6. Վրձին փոքր	-"-	3	3	3	3
7. Ցելոֆանե տոպրակներ	-"-	50	50	50	50
8. Բացովի սանդուղք	-"-	1	1	1	1
9. Ձեռնոցներ	լրակազմ	5	5	5	5
10. Գրիչ	հատ	2	2	2	2
11. Մատիտ	-"-	2	2	2	2
12. Նոթատետր (15 x 20 սմ, 150 թերթ)	-"-	2	2	2	2
13. Բեռնարկղեր՝ միջատներ հավաքելու	-"-	5	5	5	5

Տեխնիկական միջոցի անվանումը	Չափման միավոր	Ծովային ԲՀԿ*	Օդային ԲՀԿ*	Ավտոմոբիլային ԲՀԿ*	Երկաթուղային ԲՀԿ*
համար					
14. Խածատիչ	կգ	1	1	1	1
15. Կապարակնքիչ	հատ	1	1	1	1
16. Մետաղալար՝ կապարակնքման համար	մ	10	10	10	10
17. Կապարակնիքներ	հատ	100	100	100	100
18. Ունելի	հատ	2	2	2	2
19. Փորձանոթներ	-"-	20	20	20	20
20. Պատրաստուկային ասեղներ	-"-	10	10	10	10
21. Կոմբինեզոն	-"-	1	1	1	1

[1]

[1] * Բուսասանիտարական հսկիչ կետ։

Ծանոթագրություններ.

1. Նշված նորմերը նվազագույնն են եւ կարող են ավելացվել՝ ելնելով բուսասանիտարական հսկիչ կետի հաստիքների թվաքանակից եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բեռնահոսքի ինտենսիվությունից։

2. Բուսասանիտարական հսկիչ կետում տեսուչի պայուսակների լրակազմերի քանակը կախված է բուսասանիտարական հսկիչ կետի հաստիքների թվաքանակից։

3. Մեկ տեխնիկական միջոցը թույլատրվում է փոխարինել իր նշանակությամբ եւ կիրառմամբ համանման մեկ այլ միջոցով։

4. Կահույքը, կենցաղային տեխնիկան, կազմտեխնիկան եւ սարքավորումները, ըստ անհրաժեշտության, ձեռք են բերվում՝ հաշվի առնելով բուսասանիտարական հսկիչ կետի հաստիքների թիվը եւ ծառայողական շինությունների առկայությունը։

[1]